ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20.04.2021 Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: (Զեկ. Կ. Պողոսյան)
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում: (Զեկ. Կ. Պողոսյան)
3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում: (Զեկ. Կ. Պողոսյան)
4. Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: (Զեկ. Կ. Պողոսյան)
5. Ֆակուլտետի 2021-2025 ուստարիների ուսումնական պլանների հաստատում: (Զեկ. Կ. Պողոսյան)
6. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Կ. Պ. Պողոսյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 5 զեկուցվող և մեկ ընթացիկ հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Զեկուցողը նշեց,

որ երկրորդ կիսամյակում ավարտական կուրսի ուսանողները չունեն ընթացիկ քննություններ և ստուգումներ (ըստ ուսումնական պլանի՝ 8-րդ կիսամյակում նախատեսվում են միայն հանրագումարային քննություններ): Նա նշեց, որ 1-ից 3-րդ կուրսերում քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումներն իրականացվել են ժամանակացույցին համաձայն: Շեշտվեց, որ ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը, հստակեցրել պահանջները: Ուսանողների կողմից բարձրաձայնված հարցաշարերին առնչվող խնդիրները լուծվել են ժամանակին, և տարաձայնություններ չեն եղել:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ավարտին արձանագրված ակադեմիական պատկերը.

«Պատմություն» կրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է 3.62, իսկ անվճար ուսուցման համակարգում արձանագրվել է 3.65: Ընթացիկ ստուգումների միջին գնահատականը կազմել է 8.15, իսկ անվճարում՝ 9.23 միավոր:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է 3.50, իսկ անվճար ուսուցման համակարգում արձանագրվել է 4.94: Ընթացիկ ստուգումների միջին գնահատականը կազմել է 6.91, իսկ անվճարում՝ 9.43 միավոր:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է 4.00, իսկ անվճար ուսուցման համակարգում արձանագրվել է 4.50: Ընթացիկ ստուգումների միջին գնահատականը կազմել է 7.83, իսկ անվճարում՝ 8.25 միավոր:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է 4.57, իսկ անվճար ուսուցման համակարգում արձանագրվել է 4.75: Ընթացիկ ստուգումների միջին գնահատականը կազմել է 7.43, իսկ անվճարում՝ 5.00 միավոր:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններ եղել են միայն III կուրսում: Միջին գնահատականը կազմել է 3.64, իսկ անվճար ուսուցման համակարգում

արձանագրվել է 4.80: Ընթացիկ ստուգումների միջին գնահատականը կազմել է 7.37, իսկ անվճարում՝ 8.46 միավոր:

«Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է 3.65, իսկ անվճար ուսուցման համակարգում արձանագրվել է 4.20: Ընթացիկ ստուգումներ նախատեսված է եղել միայն III կուրսում: Միջին գնահատականը կազմել է 8.90, իսկ անվճարում՝ 9.08 միավոր:

2020-2021 ուստարվա II կիսամյակի առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.65 ընդհանուր և 4.20 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումների միջին գնահատականը՝ 7.55, իսկ անվճարում՝ 8.61 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գրիգորյանը, Վ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և նախապաշտպանությունների արդյունքները: Զեկուցողը նշեց, որ նախապաշտպանությունների ժամանակ որոշ աշխատանքներում ուսանողներն ունեցել են խնդիրներ և դժվարություններ: Նկատված թերությունները հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրից ավարտական աշխատանք է գրում 21 ուսանող, իսկ ֆրանսերեն լեզու և գրականություն կրթական

ծրագրով՝ 3 ուսանող: Ըստ զեկուցողի հաղորդման՝ ուսանողների գերակշիռ մասը կատարել է աշխատանքի 50-60%-ը:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրից ավարտական աշխատանք է գրում 14 ուսանող: Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 70%-ը:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրից ավարտական աշխատանք է գրում 41 ուսանող: Ուսանողների մեծ մասը հասցրել է կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

«Պատմություն» կրթական ծրագրից ավարտական աշխատանք է գրում 8 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, ակտիվացնել հանդիպումները գիտական ղեկավարների հետ, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020 - 2021 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ղեկավարվելով «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» / 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման/՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ:

Զեկուցողը Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման /առկա և հեռակա/ և մանկավարժի լրացուցիչ որակավորման ամփոփիչ քննության հանձնաժողովների կազմերը՝ ըստ կրթական ծրագրերի.

«Պատմություն» կրթական ծրագիր

Սամվել Անդրանիկի Պողոսյան-ՀՊՄՀ, պ.գ.դ., պրոֆեսոր, Հայոց պատմության ամբիոն, հանձնաժողովի նախագահ

Դավիթ Ֆեդիկի Թինոյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ.գ.թ., դոցենտ, անդամ

Նաթելլա Սերոժի Գրիգորյան- պ.գ.թ., դոցենտ, անդամ

Հովհաննես Ստյոպայի Ալեքսանյան- պ.գ.թ., դոցենտ, անդամ

Աննա Էդիկի Մելքումյան – Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ, անդամ

Սամվել Սեյրանի Սիմոնյան – Խաշթառակի միջնակարգ դպրոցի տնօրեն, անդամ

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Եվա Ժորայի Մնացականյան- ՀՊՄՀ, բ.գ.թ., դոցենտ, Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հանձնաժողովի նախագահ

Վաչագան Վարազդատի Ավագյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ

Աիդա Ասիլբեկի Սարհատյան- բ.գ.թ., դոցենտ, անդամ

Լուսինե Վիլիկի Թումանյան - բ.գ.թ., դոցենտ, անդամ

Անահիտ Գագիկի Ղուկասյան-Տավուշի մարզային գրադարանի տնօրեն, անդամ

Նազելի Աշոտի Ղալումյան- Իջևանի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն, անդամ

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

Լուիզա Խորենի Միլիտոսյան – մ.գ.թ., դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, հանձնաժողովի նախագահ

Լիանա Միխայիլի Հարությունյան-ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ., ասիստենտ, անդամ

Էդուարդ Իշխանի Այվազյան- մ.գ.դ., պրոֆեսոր, անդամ

Արմինե Վալերիի Միքայելյան - մ.գ.թ., դոցենտ, անդամ

Անուշ Վալոդյայի Մեհրաբյան- Գանձաքարի միջնակարգ դպրոցի տնօրեն, անդամ

Գևորգ Մացակի Թադևոսյան - «SOS մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի Իջևանի ծրագրի ղեկավար, անդամ

«Հոգեբանություն » մասնագիտություն /հեռակա/

Անահիտ Գուրգենի Ստեփանյան – հ.գ.թ., դոցենտ, ՀՖԿՍՊԻ պր. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոն, հանձնաժողովի նախագահ

Լիանա Միխայիլի Հարությունյան-ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ., ասիստենտ, անդամ

Աննա Սերոժի Քամալյան – հ.գ.թ., ասիստենտ, անդամ

Վաչագան Պետրոսի Սարգսյան - բժշկ. գ.թ., դոցենտ, անդամ

Աննա Գիգուշի Հովակիմյան – «SOS մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի Իջևանի ծրագրի ընտանեկան խնամքի ղեկավար, անդամ

Վարուժան Սպիրիդոնի Մելքոնյան- «ԱՅԳ» հոգեբանական ծառայությունների կենտրոնի տնօրեն, անդամ

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության

«Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրեր

Անահիտ Բաղդասարի Լալաբեգյան - ՀՊՄՀ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ, Անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնի վարիչ, հանձնաժողովի նախագահ

Քրիստինե Մուրադի Հարությունյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ

Աստղիկ Էդվարդի Չուբարյան- բ.գ.թ., պրոֆեսոր, անդամ

Աիդա Սերոժի Մարդանյան- ասիստենտ, անդամ

Մարինե Սամվելի Ասատրյան – Դիլիջանի թիվ 4-րդ դպրոցի փոխտնօրեն, անդամ

Անի Սերգեյի Հարությունյան – «Տավուշի մարզի ինտեգրված և հավասարակշռված տնտեսական զարգացում» ծրագրի համակարգող, անդամ

«Մանկավարժի լրացուցիչ որակավորում»

Լուիզա Խորենի Միլիտոսյան – մ.գ.թ., դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, հանձնաժողովի նախագահ

Ալիսա Զավենի Հասանյան- Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ., անդամ

Քրիստինե Մուրադի Հարությունյան- Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ

Աշոտ Գուրգենի Փաշինյան- Իջևանի Սպարտակ Սարգսյանի անվան թիվ 1-ին հիմնական դպրոցի տնօրեն, անդամ

Մարսպետ Պարգևի Թիրաբյան - Իջևանի Սպարտակ Սարգսյանի անվան թիվ 1-ին հիմնական դպրոցի ուսուցիչ, անդամ

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2020-2021 ուստարվա Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն» (հեռակա), «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների և «Մանկավարժի լրացուցիչ որակավորման» հանձնաժողովի կազմերը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի, 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը: Նա նշեց, որ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ որոշվել է քննությունները անցկացնել ZOOM հարթակում և լսարանային պայմաններում՝ պահպանելով անհրաժեշտ հակահամաճարակային պայմանները: Զեկուցողը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը/, իսկ քննաշրջանը կանցկացվի հունիսի 7-ից հունիսի 26-ը: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, երկար ժամանակ է՝ փակցված են, և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ խոսեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ ֆակուլտետի ամբիոններում քննարկվել են 2021-25 և 2021-26 ուստարիների բակալավրիատի ուսումնական պլանները, և որոշ կրթական ծրագրերում առաջարկվել է կատարել որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, «Պատմություն» կրթական ծրագրում կատարվել է բենչմարքինգ ԵՊՀ նույնանուն կրթական ծրագրի հետ, որից ելնելով՝ նպատակահարմար է համարվել 3-րդ կիսամյակում «Ազգագրության հիմունքներ և հայ ազգագրություն» առարկայի լսարանային ժամերը դարձնել 90 ժամ (դաս.՝ 60 ժամ, սեմ.՝ 30 ժամ), կրեդիտը՝ 6, գնահատման ձևը՝ եզրափակիչ գն.: Փոփոխությունը հիմնավորված է նրանով, որ ԵՊՀ «Պատմություն» կրթական ծրագրով այն նախատեսված է երկու մոդուլներով՝ «Ազգագրության հիմունքներ» և «Հայ ազգագրություն»՝ ընդհանուր 90 ժամ լսարանային բեռնվածությամբ (6 կրեդիտ) և, բացի այդ, ըստ դասընթացը վարող դասախոսի և ուսանողների՝ դասընթացի թեմատիկան ավելի ծավալուն է, քան ժամաքանակն է:

4-րդ կիսամյակում առաջարկվել է «Հայոց պատմություն-3» առարկայի լսարանային ժամերը դարձնել 60 ժամ (դաս.՝ 40 ժամ, սեմ.՝20 ժամ), կրեդիտը՝ 4, գնահատման ձևը՝ եզրափակիչ գն.: Փոփոխությունը պայմանավորված է թեմատիկայով և այն փաստով, որ ԵՊՀ «Պատմություն» կրթական ծրագրով այն ևս նախատեսված է քիչ ժամաքանակով:

5-րդ կիսամյակում առաջարկվել է «Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն» առարկայի լսարանային ժամերը դարձնել 60 ժամ (դաս.՝ 45 ժամ, սեմ.՝15 ժամ)՝ առանց կրեդիտի փոփոխության, գնահատման ձևը՝ առանց եզրափակիչ գն.:

7-րդ կիսամյակում առաջարկվել է «Հայոց պատմության պատմագրություն» առարկայի կրեդիտը 6-ից դարձնել 5՝ առանց ժամաքանակի փոփոխության (դաս.՝ 45 ժամ, սեմ.՝15 ժամ), գնահատման ձևը՝ եզրափակիչ գն., «Նորագույն պատմություն» առարկայի լսարանային ժամերը դարձնել 105 ժամ (դաս.՝ 75 ժամ, սեմ.՝ 30 ժամ), կրեդիտը 7 միավորից դարձնել 8, գնահատման ձևը՝ եզրափակիչ գն.:

«Հոգեբանություն» կրթական ծրագրում ևս նախատեսվել են որոշակի փոփոխություններ՝ ելնելով դասընթացների առանձնահատկություններից: Այսպես՝ 1-ին կուրսի 1-ին կիսամյակում առաջարկվել է ավելացնել «Հոգեբանության հիմունքներ» առարկան՝ 90 ժամ (դաս.՝ 30 ժամ, գործ.՝ 15 ժամ, սեմ.՝ 15 ժամ, ինքն.՝ 30 ժամ), «Անձնային աճի պրակտիկում» դասընթացից 30 ժամ տեղափոխել 2-րդ կուրս (դաս.՝ 10 ժամ, գործ.՝ 20 ժամ), «Ռազմական հոգեբանություն» դասընթացը դարձնել 120 ժամ՝ ավելացնելով լսարանային ժամերը՝ որոշ դասընթացների ինքնուրույնի ժամերը կրճատելու հաշվին, կամընտրական առարկաների մեջ ավելացնել «Հոգեբանական առաջին օգնություն» դասընթացը:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրում առաջարկվել է փոփոխության ենթարկել միայն «Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն-2» դասընթացի 2-րդ կիսամյակի ժամաքանակը՝ դասախոսության ժամերի հաշվին ավելացնելով գործնականի ժամերը (դաս.՝ 15 ժամ, գործ.՝ 45 ժամ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ներկա դասախոսները ներկայացրեցին իրենց տեսակետները և հիմնավորեցին: Նրանք ևս մեկ անգամ փաստեցին, որ ուսումնական պլանները բավականին լավ են քննարկվել, փոփոխությունները բխում են դասընթացների պահանջներից, և նշված ժամանակահատվածում այլ փոփոխությունների կարիք չի նկատվում:

ՈՐՈՇԵՑԻՆ

2021-25 և 2021-26 բակալավրի ուստարվա ուսումնական պլաններում կատարել նախատեսված փոփոխությունները: